Luys Lnyu®

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ ԱՄԻՍՆԵՐԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1
   1.1. Արդյունաբերություն 2
   1.2. Շինարարություն 4
   1.3. Ծառայություններ 4
   1.4. Առևտուր 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 8
4. ՓՈԽԱՐԺԵՔ 9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 10
   5.1. Պետական բյուջեի եկամուտները 10
   5.2. Բյուջեի ծախսերը 12
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը 13
   5.4. Պետական պարտք 13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 15
   6.1. Գնաճ 15
   6.2. Ավանդներ 15
   6.3. Վարկեր 16
   6.4. Դրամական փոխանցումներ 19
7. ԱՄՓՈՓՈՒՄ 19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2026թ. առաջին եռամսյակում տնտեսական ակտիվությունը պահպանվել է բարձր մակարդակում, սակայն ամսական դինամիկան ցույց է տալիս աճի տեմպի աստիճանական դանդաղում: Մարտին տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի) աճը կազմել է 6.6%՝ փետրվարի 7.2%-ի դիմաց, ինչի արդյունքում հունվար-մարտ ամիսների կուտակային աճը կազմել է 7.1%՝ հունվար-փետրվարի 7.4%-ի համեմատ: Դանդաղումը հիմնականում պայմանավորված է առևտրի ոլորտի ցածր աճով, ինչպես նաև արդյունաբերության աճի տեմպի կտրուկ դանդաղմամբ:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2026թ. հունվար-մարտ ամիսներին ՏԱՑ-ի աճին ամենամեծ նպաստումն ունեցել է արդյունաբերության ոլորտը՝ շուրջ 3.1 տոկոսային կետով: Տնտեսական ակտիվության աճին նշանակալիորեն նպաստել են նաև ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար 2.1 և 1.2 տոկոսային կետով: Առևտրի ոլորտի նպաստումը եղել է համեմատաբար ավելի փոքր՝ կազմելով շուրջ 1.0 տոկոսային կետ, ինչը մասամբ բացատրում է մարտին տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղումը:

Գյուղատնտեսության ոլորտում արձանագրվել է բացասական դինամիկա: Ընթացիկ տարվա առաջին եռամսյակում գյուղատնտեսության ոլորտում գրանցվել է 5.2% անկում, ինչը տնտեսական ակտիվության աճին հակազդել է 0.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2026թ. հունվար-մարտ ամիսներին, տոկոսային կետ[1]



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտը 2026թ. առաջին եռամսյակում շարունակել է մնալ տնտեսական ակտիվության աճի հիմնական շարժիչներից մեկը, սակայն մարտին ոլորտի աճի տեմպը էականորեն դանդաղել է: Հունվարին արդյունաբերության թողարկման աճը կազմել է 10.6%, փետրվարին արագացել է մինչև 23.8%, իսկ մարտին նվազել է մինչև 7.0%: Արդյունքում հունվար-մարտ ամիսների կուտակային աճը կազմել է 13.4%՝ հունվար-փետրվարի 17.2%-ի

[1] Նպաստումների հաշվարկն իրականացվել է ՏԱՑ-ի 2025թ. տարեկան կշիռների հիման վրա: Տարեկան և ամսական կշիռների տարբերությունների պատճառով առաջացող մնացորդը բաշխվել է ոլորտների միջև՝ նորմավորելով ըստ նպաստումների չափերի:

համեմատ: Սա վկայում է, որ արդյունաբերության աճը պայմանավորող գործոնները կայուն չեն, ինչի մասին նշել էինք նաև նախորդ ամիսների տեղեկանքներում:

Հունվար-փետրվար ամիսների տվյալներով[2], արդյունաբերության ոլորտի աճը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության և հանքարդյունաբերության աճերով, որոնք կազմել են համապատասխանաբար 14.5% և 42.6%՝ ընդհանուր արդյունաբերության աճին նպաստելով 9.3 և 6.6 տոկոսային կետով: Արդյունաբերության աճին դրական նպաստում է ունեցել նաև «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաոլորտը՝ ունենալով շուրջ 1.3 տոկոսային կետ նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաոլորտի նպաստումը եղել է գրեթե զրոյական:

Հանքարդյունաբերության ոլորտի աճը պայմանավորված է եղել մետաղական հանքաքարի արդյունահանման շուրջ 45.6% աճով: Մշակող արդյունաբերության աճին առավելապես նպաստել են «հիմնական մետաղների արտադրություն», «քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն» և «խմիչքների արտադրություն» ենթաոլորտների աճերը, որոնց նպաստումները մշակող արդյունաբերության աճին կազմել են համապատասխանաբար 6.9, 2.5 և 1.8 տոկոսային կետ: Հատկանշական է, որ «հիմնական մետաղների արտադրություն» ենթաոլորտի արագ աճը մեծապես պայմանավորված է ոսկերչական արտադրանքի վերաարտահանման հետ կապված գործոններով: Ուստի փետրվարին արձանագրված կտրուկ արագացումը ևս կարող է արտացոլել այդ երևույթի ազդեցությունը:

[2] Արդյունաբերության մարտ ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ոլորտում բարձր աճի տեմպերը շարունակվել են նաև մարտին: Շինարարության ոլորտում աճի տեմպը արագացել է ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ընթացքում՝ մարտին հասնելով 24.0%-ի: Արդյունքում հունվար-մարտ ամիսների կուտակային աճը կազմել է 22.0%՝ հունվար-փետրվարի 20.5%-ի համեմատ: Ոլորտի նման բարձր և արագացող աճը շարունակում է մնալ ուշագրավ՝ հաշվի առնելով նախորդ տարվա բարձր բազան, ինչպես նաև այն սպասումները, որ Երևանի մասով հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի ծրագրի ավարտից հետո շինարարության աճի տեմպերը պետք է աստիճանաբար դանդաղեին:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ոլորտում աճի տեմպը պահպանվել է համեմատաբար բարձր մակարդակում: 2026թ. մարտին ծառայությունների ոլորտի աճը կազմել է 7.8%՝ որոշակիորեն արագանալով փետրվարի համեմատ: Արդյունքում հունվար-մարտ ամիսների կուտակային աճը կազմել է 7.4%, ինչը 2025թ. նույն ժամանակահատվածի ցուցանիշից ցածր է շուրջ 3.8 տոկոսային կետով:

Ծառայությունների ոլորտի աճը, հունվար-փետրվար ամիսների տվյալներով[3], պայմանավորված է եղել գրեթե բոլոր ենթաոլորտներում գրանցված աճերով, որոնցից ամենանշանակալին են եղել «տրանսպորտ» և «տեղեկատվություն և կապ» ենթաոլորտների նպաստումները՝ կազմելով համապատասխանաբար 1.5 և 1.4 տոկոսային կետ: Անկում է արձանագրվել միայն կրթական ծառայությունների մասով՝ շուրջ 2.6%-ով, որի բացասական նպաստումը, սակայն, ընդհանուր ծառայությունների աճին եղել է աննշան՝ 0.1 տոկոսային կետ:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում աճի տեմպը 2026թ. առաջին եռամսյակում մնացել է թույլ՝ չնայած փետրվարին արձանագրված ժամանակավոր արագացմանը: Մարտին առևտրի աճը կազմել է ընդամենը 0.2%, ինչի արդյունքում հունվար-մարտ ամիսների կուտակային աճը դանդաղել է մինչև 2.1%՝ հունվար-փետրվարի 3.3%-ի համեմատ: Առևտրի նման թույլ դինամիկան տնտեսական ակտիվության ընդհանուր աճի տեմպի դանդաղման հիմնական գործոններից մեկն է:

[3] Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ[4]

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման դինամիկան 2026թ. առաջին եռամսյակում եղել է անկայուն: Հունվարին արձանագրված նվազումից հետո փետրվարին գրանցվել էր արտահանման կտրուկ աճ՝ 40.5%, սակայն այդ վերականգնումը կարճաժամկետ բնույթ է կրել: Մարտին կրկին արտահանման անկում է գրանցվել՝ 12.6%-ով: Արդյունքում հունվար-մարտ ամիսների արտահանման կուտակային աճը կազմել է ընդամենը 4.5%՝ հունվար-փետրվարի 15.2%-ի համեմատ: Սա վկայում է, որ փետրվարին արձանագրված բարձր աճը, ամենայն հավանականությամբ, կայուն արտահանման ընդլայնման արդյունք չէր և կարող էր զգալի չափով պայմանավորված լինել վերաարտահանման գործոններով:

Հունվար-փետրվար ամիսների տվյալներով[5], արտահանման աճը առավելապես պայմանավորվել է «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի արտահանման 2.1 անգամ աճով, որի նպաստումն արտահանման ընդհանուր աճին կազմել է 14.0 տոկոսային կետ: Միևնույն ժամանակ, արտահանման աճը զսպել է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման 8.0% անկումը, որի բացասական նպաստումը կազմել է 2.2 տոկոսային կետ: Մնացած ապրանքախմբերի ազդեցությունն արտահանման աճի վրա էական չի եղել՝ բացառությամբ «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի: Վերջինս աճել է 6.5%-ով և ընդհանուր արտահանման աճին նպաստել 1.27 տոկոսային կետով:

---

[4] Արտահանման և ներմուծման 2026թ. նախորդ ամսվա ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

[5] Արտահանման մարտ ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման ծավալների դինամիկան, ինչպես արտահանման դեպքում, 2026թ. առաջին եռամսյակում եղել է անկայուն: Հունվարին արձանագրված էական նվազումից հետո փետրվարին ներմուծումը կտրուկ աճել է՝ 30.5%-ով, սակայն այդ աճը նույնպես կարճաժամկետ բնույթ է կրել: Մարտին ներմուծումը կրկին նվազել է՝ գրանցվել է 3.2% անկում: Արդյունքում հունվար-մարտ ամիսների ներմուծման կուտակային աճը կազմել է 4.6%՝ հունվար-փետրվարի 9.2%-ի համեմատ: Սա վկայում է, որ փետրվարին արձանագրված ներմուծման բարձր աճը, ինչպես և արտահանման դեպքում, հավանաբար կայուն ներքին պահանջարկի ընդլայնման արդյունք չէր և կարող էր զգալիորեն պայմանավորված լինել վերաարտահանման գործոններով:

Հունվար-փետրվար ամիսների տվյալներով[6], ներմուծման աճը հիմնականում պայմանավորվել է երեք ապրանքախմբերի՝ «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «պատրաստի սննդի արտադրանք» և «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» աճերով: Նշված ապրանքախմբերի նպաստումները ներմուծման ընդհանուր աճին կազմել են համապատասխանաբար 4.0, 3.2 և 2.3 տոկոսային կետ: Միևնույն ժամանակ, ներմուծման աճը զսպել է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի 27.5% անկումը, որի բացասական նպաստումը կազմել է 3.9 տոկոսային կետ:

Հատկանշական է, որ «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի մասով աճ է արձանագրվել ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման ուղղությամբ: Սա կարող է վկայել, որ տվյալ ապրանքախմբի

[6] Ներմուծման մարտ ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

արտաքին առևտրի աճը զգալի չափով պայմանավորված է վերաարտահանման գործոններով:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ[7]

Անվանական աշխատավարձի աճի տեմպը փետրվարին մնացել է գրեթե նույն մակարդակում, սակայն պետական հատվածի աշխատավարձի աճի տեմպն արագացել է: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2026 թվականի հունվար-փետրվար ամիսներին՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 5.3%-ով (հունվարին աճի տեմպը կազմել էր 5.4%)՝ կազմելով 296.4 հազ. դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.1%-ով (հունվարի աճը՝ 5.5%)՝ կազմելով 323.2 հազ. դրամ, իսկ պետական հատվածում աշխատավարձն աճել է 5.4%-ով (հունվարի աճը՝ 4.2%)՝ կազմելով 227.7 հազ. դրամ:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2025-2026թթ. հունվար-փետրվարին, %



[7] Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, 2026թ. մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, 12-ամսյա աճը (%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



2026թ. մարտին ՀՀ դրամը, նախորդ տարվա համեմատ, արժևորված է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ և արժեզրկված՝ եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ: 2026թ. մարտին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 377.4 դրամ՝ նախորդ տարվա մարտի համեմատ նվազելով 15.4 դրամով: Եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը նույն ժամանակահատվածում արժեզրկվել է. Փոխարժեքն աճել է համապատասխանաբար 11.6 և 0.1 դրամով: Հունվար-մարտ ամիսներին ՀՀ դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 4.5%, իսկ եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ դրամն արժեզրկվել է համապատասխանաբար 6.0% և 11.5%-ով:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Պետական բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպն արագացել է: 2026թ. մարտին պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճը կազմել է 16.7%՝ փետրվարի համեմատ արագանալով 4.3 տոկոսային կետով: Հունվար-մարտ ամիսներին բյուջեի ընդհանուր եկամուտներն աճել են 11.9%-ով՝ հունվար-փետրվարի համեմատ արագանալով 2.5 տոկոսային կետով: Եկամուտների աճը պայմանավորված է եղել հարկային եկամուտների աճով, որը հունվար-մարտ ամիսներին կազմել է 13.6%՝ հունվար-փետրվարի համեմատ արագանալով 3.8 տոկոսային կետով: Նույն ժամանակահատվածում ոչ հարկային եկամուտները և պաշտոնական դրամաշնորհները նվազել են՝ համապատասխանաբար 18.0%-ով և 34.1%-ով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճին ամենամեծ նպաստումն են ունեցել եկամտային հարկը (աճը՝ 13.7%, նպաստումը՝ 4.1 տոկոսային կետ) և բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքերը, որոնք նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի -1.7 մլրդ դրամից դարձել են 20.6 մլրդ դրամ և ընդհանուր հարկերի աճին նպաստել են 3.9 տոկոսային կետով: Հարկային եկամուտների աճին նշանակալի նպաստում են ունեցել նաև ԱԱՀ-ի (աճը՝ 4.9%) և պետական տուրքերի (աճը՝ 58.6%) աճերը՝ 1.8-ական տոկոսային կետով:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2025թ. Հունվար-մարտ		2026թ. Հունվար-մարտ	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	**13.2**	**13.2**	**13.6**	**13.6**
Ավելացված արժեքի հարկ	27.1	8.9	4.9	1.8
Ակցիզային հարկ	-5.4	-0.3	17.5	0.9
Շահութահարկ	21.8	2.2	-12.8	-1.4
Պետական տուրք	15.3	0.5	58.6	1.8
Մաքսատուրք	1.2	0.0	-9.5	-0.3
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-113.0	-2.9	-	3.9
Այլ հարկեր	-4.4	-0.2	41.4	1.3
Շրջանառության հարկ	21.4	0.6	26.4	0.9
Եկամտային հարկ	12.4	3.7	13.7	4.1
Սոցիալական վճարումներ	11.1	0.6	12.7	0.6

2026թ. բյուջեով հաստատված առաջին եռամսյակի պլանի նկատմամբ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները գերակատարվել են շուրջ 36.8 մլրդ դրամով կամ 5.8%-ով: Գերակատարումը հիմնականում ձևավորվել է հարկային եկամուտների և ոչ հարկային եկամուտների հաշվին, որոնք պլանային ցուցանիշները գերազանցել են համապատասխանաբար շուրջ 33.2 մլրդ դրամով կամ 5.4%-ով և 5.3 մլրդ դրամով կամ 28.0%-ով: Միաժամանակ, պաշտոնական դրամաշնորհների մասով արձանագրվել է շուրջ 1.7 մլրդ դրամի թերակատարում:

Հարկ է նշել, որ հարկային եկամուտների դինամիկան գնահատելիս անհրաժեշտ է առանձնացնել պետական տուրքերի ազդեցությունը, քանի որ դրանց աճը հիմնականում պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով: Պետական տուրքերի նպաստումը բացառելու դեպքում հարկային եկամուտների աճը կկազմի 11.8%, ինչը գրեթե համընկնում է ՏԱՑ-ի անվանական աճի հետ՝ հունվար-փետրվարի 12.0% և հունվար-մարտի 11.9% ցուցանիշների համեմատ: Սա ցույց է տալիս, որ հարկային եկամուտների աճը էականորեն չի գերազանցում տնտեսական ակտիվության անվանական աճին: Հետևաբար, եկամուտների պլանի գերակատարումը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ոչ այնքան հարկային վարչարարության

կամ հավաքագրման արդյունավետության բարձրացմամբ, որքան պլանավորման փուլում եկամուտների պահպանողական կամ ոչ բավարար ճշգրիտ գնահատմամբ:

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճն ավելի փոքր է եղել՝ հիմնականում կապիտալ ծախսերի նվազման հետևանքով: Պետական բյուջեի ընդհանուր ծախսերը 2026թ. հունվար-մարտին աճել են 4.7%-ով՝ կազմելով 603.3 մլրդ դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է եղել ընթացիկ ծախսերի 11.8% աճով, որն ընդհանուր աճին նպաստել է 10.3 տոկոսային կետով, իսկ կապիտալ ծախսերը նվազել են 43.4%-ով՝ ծախսերի աճին հակազդելով 5.7 տոկոսային կետով:

Ի տարբերություն եկամուտների՝ ծախսերի գծով գրանցվել են էական թերակատարումներ: Ընդհանուր ծախսերը առաջին եռամսյակի բյուջեի պլանի համեմատ թերակատարվել են 234.3 մլրդ դրամով կամ 28.0%-ով, ընթացիկ ծախսերը՝ 105.3 մլրդ դրամով կամ 15.8%-ով, իսկ կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը)՝ 131.4 մլրդ դրամով կամ 75.5%-ով: Կապիտալ ծախսերի թերակատարումն հատկապես խնդրահարույց է՝ հաշվի առնելով դրանց կարևորությունը տնտեսական զարգացման և ներուժի բարձրացման տեսանկյունից:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



Պետական բյուջեն եղել է հավելուրդային: 2026թ. հունվար-մարտ ամիսներին եկամուտների և ծախսերի վերոհիշյալ դինամիկայի պայմաններում ձևավորվել է պետական բյուջեի հավելուրդ՝ շուրջ 65.2 մլրդ դրամի չափով, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից ավելի է շուրջ 2.1 անգամ կամ 44.0 մլրդ դրամով:

5.4. Պետական պարտք

ՀՀ կառավարության պարտքը շարունակում է աճել, բայց ավելի ցածր տեմպով: 2026թ. մարտի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքի ծավալը կազմել է 14,077.1 մլն ԱՄՆ դոլար, 57.8 մլն ԱՄՆ դոլարով նվազելով փետրվարի համեմատ: Կառավարության պարտքը կազմել է 14,069.0 մլն ԱՄՆ դոլար՝ 57.5 մլն ԱՄՆ դոլարով նվազելով փետրվարի համեմատ: Սակայն նախորդ տարվա մարտի համեմատ կառավարության պարտքը աճել է 7.9%-ով, որը 5.2 տոկոսային կետով ավելի ցածր է, քան փետրվարի աճն էր: Նույն ժամանակահատվածում ներքին պարտքի աճը կազմել է 7.0%, իսկ արտաքին պարտքինը՝ 4.7%:

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները, թեև նախորդ տարվա համեմատ շարունակել են նվազել, փետրվարի համեմատ գրանցվել է որոշակի աճ: 2026թ. մարտին պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը կազմել է 6.93%՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 0.03 տոկոսային կետով, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունն աճել է 0.2 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա մարտի համեմատ դրանց եկամտաբերությունները նվազել են համապատասխանաբար 1.24 և 1.68 տոկոսային կետով: Այսպիսով, թեև տարեկան կտրվածքով տոկոսադրույքների նվազման միտումը պահպանվում է, փետրվարի նկատմամբ արձանագրված աճը կարող է վկայել ֆինանսական շուկայում սպասումների որոշակի փոփոխության մասին՝ հատկապես գնաճի արագացման պայմաններում՝ արտացոլելով ներդրողների գնաճային սպասումների աճը:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը շարունակել է արագանալ՝ բարձր լինելով գնաճի թիրախային միջակայքի վերին սահմանից: 2026թ. մարտին 12-ամսյա գնաճը կազմել է 4.5%՝ փետրվարի 4.3%-ի դիմաց: Կենտրոնական բանկը դեռևս չի փոխել դրամավարկային քաղաքականության պայմանները՝ մարտ ամսվա ընթացքում տոկոսադրույքը պահպանելով 6.5% մակարդակում:

6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %





Ավանդների աճի տեմպը մարտին որոշակիորեն արագացել է և շարունակել է մնալ բարձր: 2026թ. մարտին ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 16.6%-ով՝ փետրվարի 15.8%-ի

դիմաց: Աճը շարունակել է պայմանավորված լինել ինչպես ռեզիդենտներից, այնպես էլ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների ավելացմամբ, որոնց աճերը կազմել են համապատասխանաբար 19.8% և 6.1%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ



2026թ. մարտին ավանդների աճը առավելապես պայմանավորված է եղել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճով, որի նպաստումը կազմել է շուրջ 8.0 տոկոսային կետ: Տնտեսության մյուս հատվածներից ներգրավված ավանդները նույնպես դրական են նպաստել ընդհանուր աճին, սակայն դրանց ազդեցությունը եղել է ավելի սահմանափակ: Մասնավորապես, ձեռնարկությունների և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդների նպաստումները կազմել են 3.4-ական տոկոսային կետ, իսկ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների նպաստումը՝ շուրջ 1.4 տոկոսային կետ:

6.3. Վարկեր

Վարկերի աճի տեմպը շարունակել է մնալ բարձր, թեև մարտին որոշ չափով դանդաղել է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2026թ. մարտին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 21.4%-ով՝ փետրվարի 23.0%-ի դիմաց: Աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ավելացմամբ, որոնք աճել են համապատասխանաբար 21.2%-ով և 26.2%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %





Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում աճել են ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ տնային տնտեսություններին տրամադրված վարկերը: 2026թ. մարտին իրավաբանական անձանց վարկերի աճը կազմել է 22.1%՝ որոշակիորեն դանդաղելով փետրվարի համեմատ, իսկ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճը կազմել է 20.3%՝ փոքր-ինչ արագանալով նախորդ ամսվա համեմատ: Վարկերի աճին երկու խմբերն էլ շարունակել են ունենալ գրեթե համաչափ դրական նպաստում, ինչը վկայում է վարկային պորտֆելի ընդլայնման համեմատաբար լայն հիմքի մասին:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ[8]



2026թ. մարտին տնտեսության հիմնական ուղղություններին տրամադրված վարկերը շարունակել են աճել՝ պահպանելով վարկային պորտֆելի ընդլայնման լայն հիմքը: Ամենամեծ նպաստումը շարունակել են ապահովել սպառողական վարկերը, որոնց աճը կազմել է 28.9%, իսկ նպաստումը ընդհանուր վարկերի աճին՝ շուրջ 6.5 տոկոսային կետ: Զգալի դրական նպաստումներ են ունեցել նաև ծառայությունների ոլորտին ուղղված վարկերը և հիպոթեքային վարկերը՝ համապատասխանաբար 4.1 և 3.1 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, շինարարության ոլորտին տրամադրված վարկերի նպաստումը կազմել է շուրջ 3.0 տոկոսային կետ՝ որոշակիորեն զիջելով փետրվարի ցուցանիշին:

[8] Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար[9]



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ էականորեն աճել է: Դրամական միջոցների զուտ ներհոսքը 2026թ. փետրվարին կազմել է 133.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա փետրվարի 68.8 մլն ԱՄՆ դոլարի դիմաց: Կուտակային՝ հունվար-փետրվար ամիսների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է շուրջ 3.5 անգամ, ինչը պայմանավորված է ինչպես արտահոսքի կրճատմամբ (շուրջ 14.2%), այնպես էլ ներհոսքի աճով (շուրջ 12.8%):

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2026թ. առաջին եռամսյակում տնտեսական ակտիվության աճը պահպանվել է համեմատաբար բարձր մակարդակում, սակայն ամսական դինամիկան ցույց է տալիս աճի տեմպի աստիճանական դանդաղում: Մարտին ՏԱՑ-ի աճը կազմել է 6.6%՝ փետրվարի 7.2%-ի դիմաց, ինչի արդյունքում հունվար-մարտ ամիսների կուտակային աճը նվազել է մինչև 7.1%՝ հունվար-փետրվարի 7.4%-ի համեմատ: Դանդաղումը հիմնականում պայմանավորված է առևտրի ցածր աճով և արդյունաբերության աճի տեմպի կտրուկ նվազմամբ: Սա վկայում է, որ թեև տնտեսական ակտիվությունը շարունակում է աճել, դրա ընթացիկ դինամիկան ավելի զգուշավոր գնահատման կարիք ունի:

[9] Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:
2026թ. մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. Արդյունաբերության և արտահանման աճը շարունակում է մնալ անկայուն և զգալիորեն պայմանավորված ժամանակավոր գործոններով: Արդյունաբերության աճը փետրվարին կտրուկ արագանալուց հետո մարտին էականորեն դանդաղել է՝ 23.8%-ից նվազելով մինչև 7.0%, իսկ արտահանման դեպքում փետրվարին արձանագրված 40.5% աճին հաջորդել է մարտի 12.6% անկումը: Այս դինամիկան հաստատում է նախորդ ամիսներին մեր կողմից նշված գնահատականը՝ արդյունաբերության և արտաքին առևտրի բարձր աճերը կայուն արտադրական կամ արտահանման ներուժի ընդլայնման արդյունք չեն, դրանք զգալի չափով պայմանավորված են ժամանակավոր, այդ թվում՝ առանձին ապրանքախմբերի վերաարտահանման գործոններով:

3. Գնաճը շարունակում է արագանալ: 2026թ. մարտին 12-ամսյա գնաճը կազմել է 4.5%՝ փետրվարի 4.3%-ի դիմաց՝ շարունակելով արագացման միտումը և գտնվելով գնաճի թիրախային միջակայքի վերին սահմանից բարձր: Սա նշանակում է, որ բարձր տնտեսական ակտիվության պայմաններում պահանջարկի կողմից գների ճնշումները շարունակում են պահպանվել, սակայն առկա են նաև առաջարկի կողմից ճնշումներ՝ պայմանավորված տարածաշրջանային լարվածությամբ և դրա հետևանքով առաջացող մատակարարման հնարավոր խնդիրներով: Այս պայմաններում դրամավարկային քաղաքականության պայմանները դեռևս չեն խստացվել՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը պահպանվել է 6.5% մակարդակում:

4. Հարկաբյուջետային հատվածում եկամուտների աճի և պլանի գերակատարման ֆոնին հատկապես խնդրահարույց է կապիտալ ծախսերի շարունակվող թերակատարումը: 2026թ. առաջին եռամսյակում պետական բյուջեի ընդհանուր եկամուտները պլանի համեմատ գերակատարվել են 36.8 մլրդ դրամով կամ 5.8%-ով, մինչդեռ ընդհանուր ծախսերը թերակատարվել են 234.3 մլրդ դրամով կամ 28.0%-ով: Առավել մտահոգիչ է կապիտալ ծախսերի իրավիճակը: Դրանք պլանի նկատմամբ թերակատարվել են 131.4 մլրդ դրամով կամ 75.5%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 43.4%-ով: Կապիտալ ծախսերի նման մակարդակի թերակատարումը խնդրահարույց է ոչ միայն կարճաժամկետ պահանջարկի, այլև երկարաժամկետ տնտեսական ներուժի բարձրացման տեսանկյունից: Այն նաև ցույց է տալիս, որ կապիտալ ծրագրեր պլանավորելու, պատրաստելու և իրականացնելու՝ կառավարության ինստիտուցիոնալ կարողությունները բավարար չեն, ինչի հետևանքով կապիտալ ծախսերը շարունակում են չկատարել տնտեսական աճի որակը և ներուժը բարձրացնելու իրենց հնարավոր դերը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: